



ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
Հ Ր Ա Մ Ա Ն

23 *Տարբեր* 2011 թ

N 667 - Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի
N1370-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» N1005-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության 18-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2009 թվականի հունիսի 8-ի «Դրամարկղային գրքերի կնքման և համարակալման, հարկային մարմնում կնքված դրամարկղային գրքերի հաշվառման ընթացակարգը հաստատելու մասին» N1370-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) հրամանով հաստատված N1 հավելվածում՝

ա. 1-ին կետում «հարկ վճարողներից հայտերի կամ դիմումների (այսուհետ՝ հայտ) (անհրաժեշտ այլ փաստաթղթերի) ընդունման» բառերը փոխարինել «անհրաժեշտ փաստաթղթերի ընդունման » բառերով,

բ. 2-րդ բաժնի վերնագրում «ՀԱՅՏԵՐԻ (ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՅԼ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ)» բառերը փոխարինել «ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ» բառերով

գ. 3-րդ կետի առաջին պարբերությունում «գրքերի կնքման և համարակալման համար հարկ վճարողների հայտերն» բառերը փոխարինել «գրքերը» բառով,

դ. ուժը կորցրած ճանաչել 3-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերը, 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերը,


ե. 5-րդ կետում «մերժում է հայտը՝ վերադարձնելով» բառերը փոխարինել «վերադարձնում է» բառերով, իսկ «մերժման» բառը «գիրքը չգրանցելու» բառերով:

2) ուժը կորցրած ճանաչել հրամանի N2 հավելվածը,

3) հանել հրամանի N3 հավելվածով սահմանված գրանցամատյանի ձևի 6-րդ՝ «Հայտի (դիմումի) ներկայացման ամսաթիվը, ամիսը, տարեթիվը» սյունակը:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կոմիտեի նախագահ՝



Գ. Խաչատրյան